46.	Համայնքի ավագանու անդամը իր պարտականությունների կատարման հերձակառու ստաջացած ծախսերի դիմաց ամսական դրամական փոխհարուցում:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 24-րդ հոդված						V			
47.	Իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետ						V			

1)	Նշել ավագանու կողմից ընդունված որոշման անվանումը, համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին:	Նշել դրույթի համար հիմք հանդիսացող իրավական ակտը, նորմը					V			
ԳԼՈՒԽ 2 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ										
48.	Համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորությունները՝	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդված	V							
1)	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով հրավիրել և վարել է ավագանու նիստերը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ		V				Ստուգվող ժամանակահատվածի ավագանու որոշումների նախագծերը կազմվել են թերություններով: Բացակայում են դրանց ընդունման հիմնավորումը, յուրաքանչյուր որոշման՝ քննարկում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանքները, թերի են կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ, 15-րդ հոդվածների պահանջները:	Առաջարկվում է ավագանու նիստերի հրավիրումը և գումարը իրականացնել սահմանված կարգով:	Ի գիտություն:
2)	Նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում այն ուղարկել է համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում: (Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքներում սույն կետով նախատեսված նորմատիվ ակտերը երկօրյա ժամկետում տեղադրվել են կայքում.)	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ				V		Համայնքի ղեկավարը նորմատիվ իրավական ակտ չի ընդունել:		
3)	համայնքի զարգացման ծրագրերը ներկայացրել է ավագանու հաստատմանը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	V							
4)	հաստատել է աշխատակազմի գործավարության կարգը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	V							
5)	աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ		V			Մանկապարտեզի կանոնադրությունում դեռևս չի կատարվել ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի N 4 արձանագրային որոշման 46-րդ կետով նախատեսված փոփոխությունը: Կանոնադրության վերնագիրը նույնպես չի համապատասխանում օրինակելի ձևին, ինչպես նաև սահմանված կարգով փոփոխություններ չեն կատարել աշխատակազմի կանոնադրությունում և չի փոխվել համայնքապետարանի կնիքը:	Առաջարկվում է սահմանված կարգով փոփոխություններ կատարել աշխատակազմի կանոնադրությունում և փոխել համայնքապետարանի կնիքը՝ համապատասխանեցնել գործող օրենսդրության սահմանձև, ձևախմբ:	20 օր:	
6)	համայնքային ծառայության մատվ աշխատակազմի կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ				V				
7)	աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերն ու դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ		V			Հանրային ծառայության մասին օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը համարվում է քաղաքական պաշտոն, անհրաժեշտ է աշխատակազմի հաստիքացուցակում կատարել համապատասխան փոփոխություն: Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում չի պահպանվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության <<Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքի հաստատման, հաստիքացուցակի կազմման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման>> մեթոդական ուղեցույցի 6-րդ կետի պահանջը, այն է՝ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբում ընդգրկված պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը չպետք է գերազանցի տվյալ ենթախմբին հաջորդող ենթախմբի պաշտոնային դրույքաչափի 90 տոկոսը՝ աստիճանակարգված և հաշվարկված աշխատակազմի քարտուղարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ: *Մանկապարտեզի հաստիքացուցակով և պաշտոնային դրույքաչափերով հաստիքային միավորները հատկացվել են սահմանված նորմատիվից ավել (բուժքրոջ 0.25, գլխավոր հաշվապահի 0.5, տնտեսվարի 0.5, գործավարի 1.0, լվացարարի 0.75, ֆիզ. Հրահանգիչի 0.5, դերձակի 0.25): Չի պահպանվել ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 26.01.2007թ. «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանով հաստատված	Առաջարկվում է սահմանված կարգով փոփոխություններ կատարել աշխատակազմի և մանկապարտեզի հաստիքացուցակներում:	20 օր:	
8)	համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ				V				
9)	համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ				V				

10)	Նշանակում և ազատում է հայեցողական պաշտոններ գրադեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ	V							
11)	համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով (սահմանված կարգով): Համայնքի քնակավայրերում գտնվող համայնքային հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելիս և պաշտոնից ազատելիս խորհրդակցում է վարչական ղեկավարի հետ: Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ	V							
12)	հանդես է գալիս տեղական հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ				V				
13)	օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունում է տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշում.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-րդ կետ				V				
14)	տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման համապատասխանությունը «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի պահանջներին.	<<Տեղական հանրաքվեի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ, 7.1-րդ և 8-րդ հոդվածներ				V				
15)	համայնքի ավագանուն ներկայացնում է առաջարկություն համայնքում տեղական ինքնակառավարմանը քնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ	V							
16)	համայնքի ավագանուն ներկայացնում է առաջարկություն համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ		V				Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններ ունեն ձևավորված, սակայն սահմանված կարգով նիստեր չեն գումարել, չի կատարվել ավագանու հաստատած՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների կարգի 32-րդ կետի պահանջը՝ ԽՍ-ները նիստեր են գումարում առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրվել արտահերթ նիստեր: Չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:	Առաջարկվում է՝ սահմանված կարգով, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինները իրականացնեն իրենց վերապահված լիազորությունները:	Ի գիտություն:
17)	Հայաստանի Հանրապետության համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ կնքում է պայմանագրերը և դրանք ներկայացնում համայնքի ավագանու վավերացմանը: Ավագանու հաստատմանն է ներկայացնում միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ				V				
18)	համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետ	V							
19)	համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարում կամ օգտագործման է տրամադրում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան.	«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք	V							
20)	համայնքի ավագանուն ներկայացնում է առաջարկություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային և հողաշինարարական փաստաթղթերը կամ դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշում ընդունելու վերաբերյալ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետ	V							
21)	համայնքի ավագանուն ներկայացնում է առաջարկություն համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետ	V							

22)	Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով (բացառությամբ Երևան քաղաքի) լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատման է ներկայացնում համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային եթթակայության ճանապարհների մասով) և կայացնում է որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետ					V		
23)	համայնքի ավագանու հաստատման է ներկայացնում առաջարկ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ					V		
24)	համայնքի ավագանու հաստատման է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փոփոխները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է գրանցման (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների):	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ					V		
25)	սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ	V						
26)	սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն (համայնքի բնակավայրերում այդ թույլտվության տրամադրումը կարող է լիազորել վարչական ղեկավարին):	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետ					V		
27)	ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետ	V						
28)	օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետ	V						
29)	համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրի վրա տեղադրվում է Հայաստանի Հանրապետության դրոշը, իսկ համայնքի ղեկավարի աշխատասենյակում՝ նաև Հայաստանի Հանրապետության գինանշանը:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս	V						
30)	համայնքի ղեկավարն իր պաշտոնն ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատման է ներկայացնում աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքները (համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում), աշխատողների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մաս	V						
49.	Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 3-մաս							
1)	աշխատակազմն ապահովում է համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում նրանց մասնակցությունը:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մաս	V						
2)	աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ենթակա է հաշվառման:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մաս	V						

50.	Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում կամ գործառնությունների շրջանակում, մասնավորապես՝	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մաս		V			Համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի ընդունած մի շարք իրավական ակտերը կազմված են բացթողումներով, թերի, որոնք չեն համապատասխանում օրենսդրության պահանջներին: Դրանց կարգավորման համար տեղում տրվել են պարզաբանումներ:	Իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործառնությունը՝ աշխատանքային կարգով կարգավորել, շտկել:	Ի գիտություն:
1)	ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետ		V			Ավագանու որոշումների նախագծերը կազմվել են բացթողումներով և թերություններով: Բացակայում են դրանց ընդունման հիմնավորումը, բյուջեում ծախսերի և եկամտների էական ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանքները: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդված: /	Իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործառնությունը՝ աշխատանքային կարգով կարգավորել, շտկել:	Ի գիտություն:
2)	կազմակերպում և ապահովում է աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետ			V				
3)	ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ		V			Համայնքի աշխատակազմում լիարժեք՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, կարգավորված չէ աշխատակազմի արխիվային գործը: Չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջը: Աշխատակազմի աշխատողների անձնական գործերը կազմվել են բացթողումներով, որոնց կարգավորման համար տեղում տրվել են համապատասխան պարզաբանումներ:	Առաջարկվում է աշխատակազմի արխիվում և աշխատակազմի տեղեկատվական համակարգում փաստաթղթերը համալրել, հաշվառել և պահպանել «Արխիվային գործի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:	Ի գիտություն:
4)	կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետ		V			<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետ Համայնքի ավագանու, ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի իրավագատ ակտերում առկա են մի շարք թերություններ և բացթողումներ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի և այլ քնույթի, որոնց կարգավորման համար տեղում տրվել են պարզաբանումներ: Բյուջեի կատարման տարեկան և եռամսյակային հաշվետվությունները հաստատելու մասին ավագանու որոշումները նորմատիվ չեն համարվում: -Ավագանու իրավական ակտերի հաշվառման մատյանները վարվել են բացթողումներով, չկան նշումներ նորմատիվ իրավական ակտերի մասին, նորմատիվ որոշումների ուժի մեջ մտնելու ամսաթվերը գրված են սխալ:	Իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործառնությունը՝ աշխատանքային կարգով կարգավորել, շտկել:	Ի գիտություն:
5)	ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետ		V					
6)	կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետ		V					
7)	համայնքի քնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության և հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերով.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետ		V					
8)	վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետ		V					
9)	ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետ		V			Համայնքի ղեկավարի 2020թ. որոշումները մարզպետարան չեն առաքվել, իսկ 2019թ. և 2021թ. որոշ որոշումներ ուղարկվել են սահմանված ժամկետի ուշացումներով, թերի է կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջը:	Ապահովել ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների առաքումը մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում:	Ի գիտություն:
10)	օրենքով, իրավական այլ ակտերով կամ աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կամ գործառնությունների շրջանակում նշանակում է ազատում է աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետ		V					
11)	օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների և գործառնությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետ		V					

12)	իրականացնում է օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետ	V							
13)	աշխատակազմի քարտուղարը պատասխանատվություն է կրում օրենքների, իրավական այլ ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, աշխատակազմի կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մաս	V							
14)	աշխատակազմի (բացառությամբ Երևանի քաղաքապետարանի, Գյումրու և Վանաձորի համայնքապետարանների աշխատակազմերի) կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն քանակը սահմանում է պետական լիազորված մարմինը, իսկ ներքին աուդիտի ստորաբաժանումը ներկայացվող հիմնական պահանջները սահմանում է «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազոր մարմինը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մաս				V				
15)	աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումը կարող է ստեղծվել միայն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված լինելու դեպքում.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մաս				V				
16)	աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի կանոնադրություն, որը հաստատում է համայնքի ավագանին:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մաս				V				
17)	Ավագանու նիստերի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարը:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մաս		V				Ավագանու 2018-2019 թթ նիստերի արձանագրությունները կազմվել են թերություններով և բացթողումներով, որոնք հետագայում կարգավորվել են: Թերի է կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը:	Առաջարկվում է ապահովել ավագանու բոլոր նիստերի արձանագրումը:	Ի գիտություն
51.	Աշխատակազմի քարտուղարը ապահովում է համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման գործառնությունը.	<<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետ	V					Աշխատակազմի համայնքային ծառայողների ատեստավորումները անցկացվել են 2016թ. դեկտեմբերին, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքային ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ:	Առաջարկվում է անցկացնել աշխատակազմի համայնքային ծառայողների ատեստավորումներ:	Ի գիտություն
1)	համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համապատասխան համայնքի ղեկավարը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12.1-ին հոդվածի 1-ին մասում նշված վայրերում փակցնելու միջոցով, ինչպես նաև http://www.azdazar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:.	«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված 2-րդ մաս				V				
2)	համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի համապատասխանությունը <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին.	<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդված		V				Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում օրենսդրությամբ նախատեսված վերջին փոփոխությունները չեն կատարվել, չի կատարվել «Համայնքային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջը: Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերում՝ սահմանված կարգով, վերջին փոփոխությունները չեն կատարվել:	Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում, համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերում՝ կատարել օրենսդրությամբ նախատեսված վերջին փոփոխությունները:	20 օր:
3)	համայնքային ծառայության պաշտոնի նշանակման համապատասխանությունը <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին.	<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդված	V							
52.	Յուրաքանչյուր աշխատողի պաշտոնային դրոյքաչափը չի կարող գերազանցել տվյալ համայնքի ղեկավարի պաշտոնային դրոյքաչափի՝	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մաս	V							
1)	մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,95 տոկոսը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ				V				

2)	1001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,65 տոկոսը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ				V		
3)	5001-ից մինչև 20000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,43 տոկոսը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ	V					
4)	20001-ից մինչև 75000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,26 տոկոսը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ				V		
5)	75000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,14 տոկոսը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետ				V		
6)	համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար սահմանված հավելավճարի չափը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մաս	V					
7)	համայնքի ավագանու որոշմամբ հավելավճար կարող է սահմանվել նաև համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մաս	V					
8)	աշխատակազմի և համայնքային հիմնարկների աշխատողներին ծանր և վնասակար աշխատանքի կատարման դեպքում տրվում է հավելում պաշտոնային դրույքաչափի 12 տոկոսի չափով, առանձնապես ծանր և առանձնապես վնասակար աշխատանքի կատարման դեպքում՝ պաշտոնային դրույքաչափի 24 տոկոսի չափով.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մաս				V		
9)	հավելավճարի կիրառման կարգը և չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մաս	V					
53.	Վարչական ղեկավարի լիազորությունների ընդհանուր բնութագիրը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներ				V	վարչական ղեկավարներ չունեն	
1)	բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ համայնքի կենտրոնի, ունի մեկ վարչական ղեկավար.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մաս				V		
2)	վարչական ղեկավարը տվյալ բնակավայրի հաշվառված բնակիչ է.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մաս				V		
3)	վարչական ղեկավարը գործում է համայնքի ավագանու որոշած նստավայրում.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մաս				V		
4)	վարչական ղեկավարի նստավայրի վրա տեղադրվում է Հայաստանի Հանրապետության դրոշմ, իսկ աշխատասենյակում՝ նաև Հայաստանի Հանրապետության զինանշանը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մաս				V		
5)	հետևում է բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ				V		
6)	աջակցում և կազմակերպում է իր բնակավայրում կատարելու համայնքի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ ու քննարկումներ.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ				V		
7)	աջակցում և կազմակերպում է իր բնակավայրում համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքով, ՀՀ այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության և հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերով.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ				V		

8)	աջակցում և կազմակերպում է իր բնակավայրում տեղական ինքնակառավարման անկշվող օրենսդրական և ենթօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լուսմեր կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ					V		
9)	աջակցում և կազմակերպում է իր բնակավայրում օրենքով սահմանված կարգով տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ					V		
10)	համայնքի ավագանու սահմանած կարգին համապատասխան՝ անցկացնում է բնակավայրին վերաբերող հարցերի հանրային լուսմեր կամ քննարկումներ և արդյունքների մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ					V		
11)	մասնակցում է համայնքի ավագանու նիստերին:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ					V		
12)	առաջարկություններ է ներկայացնում ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ					V		
13)	առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու վերաբերյալ:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետ					V		
14)	առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6.2-րդ կետ					V		
15)	համայնքի ղեկավարի կողմից լիազորված լինելու դեպքում համայնքի ղեկավարի անունից տալիս է բնակավայրում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6.3-րդ կետ					V		
16)	իրականացնում է աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված այլ գործառնություններ:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ					V		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՏՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳ

54.	Համայնքի ղեկավարի լիազորությունները քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառներում՝	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածներ							
1)	կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է համապատասխան միջոցներ:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	V						
2)	կայացնում է որոշումներ, որոնցով խթանում է համայնքում տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի և նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացումը:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ					V		
3)	կանոնակարգում է հավաքների անցկացումը՝ Հայաստանի Հանրապետության Մասնաճյուղությամբ և օրենքով սահմանված կարգով:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ					V		

4)	կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը <<Արխիվային գործի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, <<Արխիվային գործի մասին>> ՀՀ օրենք					V			համայնքային արխիվ չունեն	
5)	ապահովում է համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը.	<<Արխիվային գործի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ					V				
6)	իրականացնում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված՝ սույն բնագավառին վերաբերող լիազորությունները.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	V								
7)	համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության).	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	V								
8)	ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	V								
9)	վազմագործում է տարածված իրազեկող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների բնութագրի և ներկայացման նախաձեռնությունների և նախագծերի ելեկտրոնային	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ		V				Համայնքի բյուջեի, տարեկան բյուջեի կատարման, զարգացման ծրագրերի նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումներ և քննարկումներ՝ սահմանված կարգի համաձայն, չեն անցկացվել:	Առաջարկվում է իրականացանել օրենքով սահմանված կարգով՝ համայնքի բյուջեի, տարեկան բյուջեի զարգացման ծրագրերի նախագծերի վերաբերյալ, հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ:	Ի գիտություն:	
10)	համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում կամ ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ					V				
11)	3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքի ղեկավարը պետք է ապահովի՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքով և համայնքի ավագանու սահմանած կարգով պաշտոնական համացանցային կայքի ստեղծումն ու վարումը: Համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առկա լինելու պետք է առկա լինեն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մաս	V								
12)	3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը, տեղեկությունը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով կամ համացանցային ցանցի, այդ թվում՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքի միջոցով.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մաս	V								
13)	3000 և ավել բնակիչ ունեցող համայնքներում ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մաս				V		Ավագանու հրապարակային նիստերը առցանց չեն հեռարձակվել համայնքի պաշտոնական համացանցային կայքում, չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջը:	Առաջարկվում է ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակել համայնքի պաշտոնական համացանցային կայքում:	Ի գիտություն:	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

55.	Համայնքի ղեկավարի լիազորությունները ֆինանսների բնագավառում.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդված	V								
1)	կազմում և համայնքի ավագանու հաստատման է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	V								

ա.	համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է համայնքի զարգացման հնգամյա ծրագրով՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա,	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մաս	V				07.10.2018թվականին Արմեն Մովսիսյան >Ա/Ձ-ից ձեռք է բերվել օդորակիչներ՝ 439.1 հազար դրամի չափով և նույն ժամանակահատվածում 319.5 հազար դրամի չափով, որը գնումների պլանում չի տարանջատվել ըստ ապրանքի տեսակի: 20.09.2019թվականին <Դավիթ Պետրոսյան>Ա/Ձ-ից ձեռք է բերվել լուսատուներ՝ 405.0 հազար դրամի չափով, որը չի արտացոլվել գնումների պլանում: 25.12.2020թվականին Ա/Ձ Ռ-ուզանա Հովհաննիսյանից ձեռք է բերվել ամանոթյա նվերներ՝ 640.0 հազար դրամի չափով, որի համար չներկայացվեց բաշխման ակտ: 07.10.2018թվականին <Գիպերոն>ՍՊԸ-ից ձեռք է բերվել մալուխ՝ 340.8 հազար դրամի չափով և 315.0 հազար դրամի չափով լուսատուներ, որը չի արտացոլվել գնումների պլանով: Համայնքային ենթակայությամբ գործող ՀՈԱԿ-ների տարիֆիկացիոն ցուցակը, եկամուտների և ծախսերի նախահաշիվը չի հաստատվել համայնքի ղեկավարի որոշմամբ:	Պահպանել <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի պահանջները:	20 օր:
բ.	համայնքի բյուջեի նախագիծը կազմում է բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա.	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մաս	V				Համայնքի բյուջեի 2020թվականի գույքահարկի և հողի հարկի գծով եկամուտների պլանավորման նկատմամբ տարված հսկողության արդյունքում պարզվեց, որ գույքահարկի գծով տարեկան եկամուտները ավելի ցածր են պլանավորվել քան իրականում առկա է հողի հարկի և գույքահարկի բազայում, շուրջ 8080.0 հազար դրամի չափով: Միայն պլանավորման արդյունքում 2020 թվականին հողի գծով փաստացի կատարողականը կազմել է 9904.0 հազար դրամ կամ 103.0 %, սակայն ճիշտ պլանավորման դեպքում փաստացի կատարողականը կկազմեր շուրջ 91.6 %: Աղբահանության գծով 2020թվականի համայնքի բյուջե գանձվել է 2638.1 հազար դրամ պլանավորված 6791.2 հազար դրամի դիմաց կամ փաստացի կատարողականը կազմել է 38.8 %: Սակայն ըստ փաստացի գրանցված քնակչության թվաքանակի աղբահանության գծով եկամուտները պետք է պլանավորվեր շուրջ 8000.0 հազար դրամ, այսինքն պակաս է պլանավորվել 1208.8 հազար դրամի չափով: Համայնքի բյուջեի պլանավորման և փաստացի եկամուտների կատարման նկատմամբ տարված հսկողության արդյունքում պարզվեց, որ ցածր կատարողական է արձանագրվել նաև հողի վարձակալության գծով եկամուտը, որի փաստացի կատարողականը կազմել է 54.3% կամ պլանավորված 1710.6 փաստացի կատարողականը կազմել է 928.7 հազար դրամ:	Պահպանել <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի պահանջները:	20 օր:
2)	համայնքի ղեկավարն կազմում համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից.	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մաս	V						
ա.	բյուջետային ուղերձը ներառում է համայնքի ղեկավարի գեկույցը բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին,	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի բ) կետ				V			
բ.	բյուջետային ուղերձը ներառում է համայնքի բյուջեի նախագծով նախատեսված եկամուտների և ծախսերի հիմնավորումը, եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դեֆիցիտի (պակասուրդի) կամ հավելուրդի հիմնավորումը, ինչպես նաև այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաստատված և հաշվարկային ցուցանիշների հետ,	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի գ) կետ				V			
գ.	բյուջետային ուղերձը ներառում է համայնքի բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումը, որը ներառում է ծրագրի՝ իրավական հիմքը. բովանդակությունը. խնդիրները և նպատակները. կատարման փուլերը և ժամկետները,	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի դ) կետ				V			
դ.	բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ,	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) կետ				V			
ե.	բյուջետային ուղերձը ներառում է բյուջեի վարչական և ֆոնդային մասերի պահուստային ֆոնդի ձևավորման համար առաջարկվող հատկացումների հիմնավորումը,	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի զ) կետ				V			
զ.	բյուջետային ուղերձը ներառում է պետական բյուջեի նախագծում կամ պետական բյուջեի մասին օրենքում պետական բյուջեից համայնքի բյուջեին նախատեսված հատկացումների մասին,	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի է) կետ				V			

է.	բյուջետային ուղերձը ներառում է տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների (գրադեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին.	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի թ) կետ					V			
4)	համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծը ներառում է՝	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մաս	V							
ա.	համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծը ներառում է համայնքի բյուջեի եկամուտները և ծախսերը՝ ըստ բյուջեի բաղկացուցիչ մասերի՝ <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգ մասին>> ՀՀ օրենքով սահմանված դասակարգմամբ (բացառությամբ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման),	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի ա) կետ	V							
բ.	համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծը ներառում է համայնքի բյուջեի դեֆիցիտը (պակասորդը) կամ հավելուրդը և դեֆիցիտի (պակասորդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ սույն օրենքով սահմանված դասակարգմամբ.	<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի բ) կետ	V							
5)	տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	V							
6)	օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.	<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	V				2021թ. օրենքով սահմանված տեղական տուրքերը ամբողջովին դեռևս չեն գանձվել: Չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջը:	Իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործառնություններ:	20 օր:	
